

# ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԱՄՓՈՓԱԳԻՐ

Հրապարակված է 01.12.2020թ.

Ամփոփագրում նշված պայմանները

կարող են փոփոխված լինել

Հեռ. (+374 10) 510 510, [www.inecobank.am](http://www.inecobank.am)

## Բանկային ծառայությունների Բիզնես հաճախորդների համար Բանկային ընթացիկ հաշվի սակագներ

Ծառայություն	Սակագին
Հաճախորդի խումբ	Իրավաբանական անձ/անհատ ձեռնարկատեր/նոտար
Հաշվի արժույթ	ՀՀ դրամ, ԱՄՆ դոլար, Եվրո, ՌԴ ռուբլի
Հաշվի բացման միանվագ վճար (վճարվում/գանձվում է հաշվի բացման պահին)	5,000 ՀՀ դրամ
Հաշվի ամսական սպասարկման վճար <sup>1</sup>	500 ՀՀ դրամ
Փաթեթի ամսական սպասարկման վճար <sup>2</sup>	3,000 ՀՀ դրամ

<sup>1</sup> Փաթեթի ամսական սպասարկման վճար գանձելու դեպքում հաշվի ամսական սպասարկման վճար չի գանձվում:

<sup>2</sup> Փաթեթի շրջանակում Հաճախորդին տրամադրվում է մեկ դեբետային կամ վարկային քարտ և ԻնեկոՕնլայն Էլեկտրոնային համակարգ: Փաթեթի շրջանակում դեբետային կամ վարկային քարտի համար ամսական սպասարկման վճար չի գանձվում, իսկ քարտի տրամադրման և սպասարկման այլ պայմանները կարգավորվում են «Բիզնես վճարային քարտերի և վարկային գծի տրամադրման և սպասարկման պայմաններ և սակագներ» փաստաթղթով: Լրացուցիչ քարտերը տրամադրվում են համաձայն վերոնշյալ փաստաթղթի: Փաթեթի շրջանակում սույն սակագներով սահմանված՝ Հաշվի սպասարկման լրացուցիչ վճար Ինեկո Օնլայն համակարգին միանալու դեպքում սակագինը ևս չի կիրառվում:

Հաշվի բացման համար անհրաժեշտ մուտքագրվող նվազագույն գումար	0 ՀՀ դրամ
Հաշվի փակում	Անվճար
Հաշվի նվազագույն մնացորդ	չի սահմանվում
Հաշվի միջին օրական մնացորդի նկատմամբ հաշվարկվող տարեկան պարզ տոկոսադրույք	չի սահմանվում

### Փոխանցումներ ընթացիկ հաշվից

Ճանաչություն	Սակագին
Ներբանկային փոխանցումներ	500 ՀՀ դրամ* յուրաքանչյուր փոխանցման համար
Միջբանկային և բյուջե փոխանցումներ ՀՀ դրամով	*Անվճար՝ հեռակառավարման համակարգերով ստացված հանձնարարականների համար
Միջբանկային փոխանցումներ թղթային հանձնարարական (BEN) բացի ՌԴ ռուբլուց	5,000 ՀՀ դրամ <sup>3</sup>
Միջբանկային փոխանցումներ թղթային հանձնարարական (OUR) <sup>4</sup>	<ul style="list-style-type: none"> <li>🚩 <b>ՌԴ ռուբլի</b>՝ 0.1% նվազագույնը 5,000 ՀՀ դրամ, առավելագույնը 40,000 ՀՀ դրամ</li> <li>🚩 <b>ԱՄՆ դոլար</b>՝ 0.15% նվազագույնը 7,000 ՀՀ դրամ, առավելագույնը 60,000 ՀՀ դրամ</li> <li>🚩 <b>Եվրո և այլ արտարժույթ</b><sup>5</sup>՝ 0.15% նվազագույնը 9,000 ՀՀ դրամ, առավելագույնը 60,000 ՀՀ դրամ</li> </ul>

<sup>3</sup> Փոխանցման ծախսերը շահառուի հաշվին լինելու դեպքում:

<sup>4</sup> Guaranteed OUR տարբերակն ընտրելու դեպքում լրացուցիչ գանձվում է 12,000 ՀՀ դրամ: Սակագինը ներառում է առանց նվազեցումների գումարը ստացողի հաշվին հասցնելու ծախսերը: JPY՝ ճապոնական իենով փոխանցումների դեպքում Guaranteed OUR տարբերակը կիրառելի չէ. երրորդ բանկերի ծախսերը, առկայության դեպքում, գանձվում են հաճախորդից՝ լրացուցիչ:

<sup>5</sup> JPY՝ ճապոնական իենով փոխանցումների դեպքում սակագինը կազմում է 0.15% նվազագույնը 15,000 ՀՀ դրամ, առավելագույնը 60,000 ՀՀ դրամ:

<b>Միջբանկային «Շտապ» փոխանցումներ թղթային հանձնարարական (նույն գործառնական օրվա ընթացքում)</b>	<ul style="list-style-type: none"> <li>❖ <b>ՀՀ դրամ` 2,000 ՀՀ դրամ</b> լրացուցիչ միանվագ վճար</li> <li>❖ <b>Արտարժույթ` 5,000 ՀՀ դրամ</b> լրացուցիչ միանվագ վճար</li> </ul>
<b>Հեռակառավարման համակարգերով ստացված արտարժույթային միջբանկային հանձնարարականներ</b>	Թղթային հանձնարարականների սակագների նկատմամբ 20% ցածր սակագին (այդ թվում Guaranteed OUR, BEN փոխամցումների և «Շտապ» փոխանցումների համար)
<b>Վճարման հանձնարարականի կատարման վերաբերյալ հարցման ներկայացում, պայմանների փոփոխում կամ չեղյալացում</b>	<ul style="list-style-type: none"> <li>❖ 1,500 ՀՀ դրամ` ՀՀ դրամի դեպքում</li> <li>❖ 6,000 դրամ` ՌԴ ռուբլու դեպքում</li> <li>❖ 30,000 ՀՀ դրամ` ԱՄՆ դոլարի և Եվրոյի և այլ արտարժույթի դեպքում</li> </ul>

## Հաշիվների սպասարկում հեռակառավարման համակարգերով և պարբերական վճարումների հանձնարարականով

Ճառայություն	Սակագին
<b>Հաշվի սպասարկման լրացուցիչ վճար ԻնեկոՕնլայն համակարգին միանալու դեպքում<sup>6</sup></b>	<ul style="list-style-type: none"> <li>❖ Ամսական 2,000 ՀՀ դրամ<sup>7</sup></li> <li>❖ Դիտարկման ռեժիմի դեպքում` անվճար</li> </ul>
<b>Հաշվի սպասարկում պարբերական վճարումների հանձնարարականով</b>	Անվճար

<sup>6</sup> ԻնեկոՕնլայն համակարգով հաշվի` անվտանգության սարքով սպասարկման դեպքում գանձվում է 10,000 ՀՀ դրամ հաշվի սպասարկման միանվագ վճար յուրաքանչյուր օգտագործողի համար: Այն դեպքում, երբ տվյալ օգտագործողն արդեն գրանցված է որպես ֆիզիկական անձի և/կամ իրավաբանական անձի/ԱԶ անունից անվտանգության սարքով ԻնեկոՕնլայն Էլեկտրոնային համակարգի օգտագործող, վերոնշյալ միանվագ սակագինը կազմում է 0 ՀՀ դրամ: Անվտանգության սարքի վնասման կամ կորստի դեպքում Բանկն իրավունք ունի Հաճախորդից գանձել տուգանք 10,000 ՀՀ դրամի չափով:

<sup>7</sup> Փաթեթի ամսական սպասարկման վճար գանձելու դեպքում Ինեկո օնլայն համակարգի ամսական սպասարկման վճար չի գանձվում:

## Հաշիվների քաղվածքների և տեղեկանքների տրամադրում

Ճառայություն	Սակագին
Հաշվի քաղվածքի տրամադրում Բանկում և Էլ. փոստով	Անվճար
Հաշվի քաղվածքի տրամադրում Փոստով (ամսական)	2,000 ՀՀ դրամ + փոստային առաքման ծախսերը
Հաշվի քաղվածքի կրկնօրինակի տրամադրում <sup>8</sup>	<ul style="list-style-type: none"> <li>❖ մինչև 1 տարվա վաղեմության՝ 1,000 ՀՀ դրամ</li> <li>❖ 1 տարուց ավել վաղեմության՝ 3,000 ՀՀ դրամ</li> </ul>
Տեղեկանքների և տեղեկատվության տրամադրում (առավելագույնը 5 տարի վաղեմությամբ)	<ul style="list-style-type: none"> <li>❖ Բանկային հաշվի վերաբերյալ և SWIFT հաղորդագրության պատճենի տրամադրում - 3,000 ՀՀ դրամ<sup>9</sup></li> <li>❖ Առևտրական հարցման պատասխան, վարկային պատմության վերաբերյալ և այլ տիպի կամ վաղեմության տեղեկատվության տրամադրում – 10,000 ՀՀ դրամ</li> </ul>

## Դրամարկղային գործառնություններ

Ճառայություն	Սակագին
Կանխիկ գումարի մուտքագրում Հաշվին	<ul style="list-style-type: none"> <li>❖ ՀՀ դրամի, ԱՄՆ դոլարի, Եվրոյի համար անվճար</li> <li>❖ ՌԴ ռուբլով ժամկետային ավանդ ներդնելու և վարկի մարման նպատակով մուտքագրվող գումարների համար սակագինը 0 ՀՀ դրամ է, մնացած դեպքերի համար՝ պայմանագրային</li> </ul>

<sup>8</sup> Փոստային առաքման դեպքում լրացուցիչ կգանձվի փոստային առաքման ծախսը:

<sup>9</sup> SWIFT հաղորդագրության պատճենը Ինտեր Օնլայն համակարգի միջոցով տրամադրվում է անվճար:

<b>Կանխիկ գումարի ելքագրում Հաշվից<sup>10</sup></b>	<ul style="list-style-type: none"> <li>❖ ՀՀ դրամի համար 0.2%, բայց ոչ պակաս քան 500 ՀՀ դրամ</li> <li>❖ ԱՄՆ դոլարի/Եվրոյի համար 0.5%, բայց ոչ պակաս քան 2,000 ՀՀ դրամ</li> <li>❖ ՌԴ ռուբլու համար 0.35%, բայց ոչ պակաս քան 1,500 ՀՀ դրամ</li> </ul>
<b>ԱՄՆ դոլարի, Եվրոյի, ՌԴ ռուբլու հնամաշ թղթադրամների և մինչև 1996 թվականը թողարկված ԱՄՆ դոլարի թղթադրամների փոխանակում</b>	5%, եթե Բանկը համարում է, որ թղթադրամը փոխանակման ենթակա է
<b>Հնամաշ ՀՀ դրամի թղթադրամների փոխանակում</b>	Անվճար
<b>Կանխիկ միջոցների հաշվարկ, ստուգում և փաթեթավորում</b>	10 ՀՀ դրամ յուրաքանչյուր թղթադրամի համար, նվազագույնը 1,000 ՀՀ դրամ
<b>Չեկային գրքույկի տրամադրում (50 Էջ)</b>	առաջինը` անվճար, յուրաքանչյուր հաջորդը` 2,500 ՀՀ դրամ
<b>Չեկային գրքույկի չեղարկում</b>	Անվճար

## Եսրոու հատուկ հաշվի սակագներ

<sup>10</sup> Սակագինը չի կիրառվում հետևյալ դեպքերում.

- կանխիկով մուտքագրված գումարների կանխիկացման դեպքում,
- հաճախորդի այլ հաշիվներից փոխանցված գումարների (այդ թվում` փոխանակման գործարքների) կանխիկացման դեպքում, եթե գումարները մուտքագրվել են կանխիկ, բացառությամբ քարտային հաշիվներից փոխանցումների,
- POS տերմինալների և հնեկոփեյ համակարգի միջոցով ստացված հասույթների գումարների կանխիկացման դեպքում,
- Ավանդի դիմում/պայմանագրի ժամկետը լրանալուց հետո ավանդի գումարի վերադարձման դեպքում,
- Բանկի կողմից մատուցվող այլ ծառայությունների պայմաններով նախատեսված դեպքերում:

Ճառայություն	Սակագին
<b>Հաշվի նկարագիր</b>	Եսքրոու հաշիվը հատուկ բանկային հաշիվ է, որի վրա դեպոզիտացվում են ապրանքի, ծառայության, անշարժ գույքի ձեռքբերման կամ այլ տեսակի գործարքների միջոցները՝ որպես գործարքի կատարման երաշխիք: Գումարը հասանելի է դառնում միայն պայմանագրով պահանջվող փաստաթղթերը Բանկ ներկայացման դեպքում:
<b>Եսքրոու հաշվի արժույթ</b>	արժույթը պայմանավորված է գործարքի արժույթով
<b>Եսքրոու հաշվի բացում<sup>11</sup></b>	0.2% գործարքի գումարից, Նվազագույնը՝ 30,000 ՀՀ դրամ Առավելագույնը՝ 300,000 ՀՀ դրամ
<b>Գործարքի պայմանների փոփոխության վճար</b>	20,000 ՀՀ դրամ
<b>Եսքրոու գումարի կանխիկացում</b>	անվճար
<b>Եսքրոու հաշվին դրական մնացորդի նկատմամբ հաշվարկվող տարեկան տոկոսադրույք</b>	0%
<b>Եսքրոու Հաշվի փակում</b>	Անվճար, գործարքի իրականացումից անմիջապես հետո

### Կառուցապատողի հատուկ հաշվի սակագներ

Ճառայություն	Սակագին
<b>Հաճախորդի խումբ</b>	Բանկում ընթացիկ հաշիվ ունեցող իրավաբանական անձ/անհատ ձեռնարկատեր
	Կառուցապատողի հատուկ հաշիվը նախատեսված է Գնորդների հետ կնքված Գնման իրավունքի պայմանագրերի հիման վրա կառուցվող շենքում բնակարանների և ոչ բնակելի տարածքների, անհատական բնակելի տների

<sup>11</sup> Որոշ դեպքերում Բանկի որոշմամբ կարող է կիրառվել սույն սակագներից տարբերվող վճար:

<b>Հաշվի նկարագիր</b>	<p>ձեռքբերման նպատակով Գևորգյանների կողմից կատարվող կանխավճարների և ձեռքբերմանն ուղղված այլ վճարների ստացման համար, ընդ որում կառուցապատողի կողմից կառուցվող յուրաքանչյուր շենքի համար բացվում է առանձին Հատուկ հաշիվ:</p> <p>Կառուցապատողի հատուկ հաշվին մուտքագրվող բոլոր դրամական միջոցները Բանկի կողմից արգելադրվում են և հասանելի չեն Կառուցապատողին օգտագործման համար բացառությամբ Կառուցապատողի հատուկ հաշվի պայմանագրով, Գնման իրավունքի պայմանագրով և օրենքով սահմանված դեպքերի:</p>
<b>Հաշվի արժույթ</b>	ՀՀ դրամ, ԱՄՆ դոլար, Եվրո, ՌԴ ռուբլի
<b>Հաշվի բացում <sup>12</sup></b>	50,000 ՀՀ դրամ
<b>Հաշվի ամսական սպասարկման վճար</b>	5,000 ՀՀ դրամ
<b>Հաշվից գումարի ելքագրում</b>	Փոխանցում հաճախորդի հնեկոբանկում գործող ընթացիկ հաշիվներին
<b>Հաշվին դրական մնացորդի նկատմամբ հաշվարկվող տարեկան տոկոսադրույք</b>	<ul style="list-style-type: none"> <li>❏ ՀՀ դրամի համար – Պայմանագրային*</li> <li>❏ ԱՄՆ դոլար – 0.0%</li> <li>❏ Եվրո – 0.0%</li> <li>❏ Ռուբլի - 0.0%</li> </ul> <p>*Շինթույլտվությամբ սահմանված կառուցապատման ավարտի պահից 6 ամիսը լրանալուց հետո, հաշվի դրական մնացորդի նկատմամբ տարեկան տոկոսադրույք այլևս չի հաշվարկվում:</p>
<b>Տոկոսների վճարման պարբերականություն</b>	<ul style="list-style-type: none"> <li>❏ Եռամսյակային</li> <li>❏ Տարեկան</li> </ul>
<b>Հաշվից քաղվածքների/տեղեկանքների տրամադրում</b>	
<b>Հաշվի քաղվածքի տրամադրում Բանկում և Էլ. փոստով</b>	Անվճար
<b>Հաշվի քաղվածքի կրկնօրինակի տրամադրում</b>	մինչև 1 տարվա վաղեմության՝ 3,000 ՀՀ դրամ

<sup>12</sup> Միևնույն արժույթով յուրաքանչյուր երկրորդ և դրան հաջորդող հաշվի բացման համար սահմանվում է հաշվի բացման սակագին՝ 50,000 ՀՀ դրամի չափով:

	1 տարուց ավել վաղեմության՝ 5,000 ՀՀ դրամ
<b>Տեղեկանքների տրամադրում</b>	5,000 ՀՀ դրամ
<b>Աուդիտի նպատակով հաշվի վերաբերյալ տեղեկությունների տրամադրում</b>	10,000 ՀՀ դրամ

## Ընդհանուր դրույթներ Բանկային հաշվի բոլոր տեսակների համար

1. «Բանկային ծառայությունների սակագներ Բիզնես հաճախորդների համար» փաստաթուղթը և «Ինեկոբանկ» ՓԲԸ Տնօրինության կողմից հաստատված «Բանկային սպասարկման հիմնական պայմաններ»-ը (այսուհետ՝ Հիմնական պայմաններ) միասին հանդիսանում են «Ինեկոբանկ» ՓԲԸ Իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերին Բանկային ծառայությունների տրամադրման դիմում/պայմանագրի անբաժանելի մասը: Սույն ամփոփագրում օգտագործվող հասկացություններն ունեն սույն իմաստը, ինչ «Ինեկոբանկ» ՓԲԸ Բանկային սպասարկման հիմնական պայմաններում:
2. Հաշիվ բացելու ցանկություն ունեցող Հաճախորդը կարող է մոտենալ Բանկի ցանկացած Բիզնես կամ Ունիվերսալ մասնաճյուղ՝ ներկայացնելով հաշվի բացման համար անհրաժեշտ փաստաթղթերը: Աշխատակիցը հաճախորդին է ներկայացնում բանկային հաշվի ծառայության պայմանները և սակագները, ստուգում է ներկայացված փաստաթղթերի լիարժեքությունն ու վավերությունը և դրանց ամբողջականության դեպքում սկսում հաշվի բացման գործընթացը՝ ապահովելով սակագներով սահմանված միջնորդավճարի գանձումը: Հարկային մարմնից հաշվի բացման հաստատումը ստանալուց հետո աշխատակիցը 1 աշխատանքային օրվա ընթացքում կազմակերպում է հաճախորդի հետ բանկային ծառայությունների տրամադրման դիմում/պայմանագրի կնքման գործընթացը:
3. Սույն փաստաթղթով սահմանված բանկային հաշիվները բացվում են անժամկետ (բացառությամբ Եսթրոու հաշվի, որոնք փակվում են գործարքի իրականացումից անմիջապես հետո):
4. ՀՀ դրամով ընթացիկ հաշվի բացման դեպքում Բանկը Հաճախորդի համար միաժամանակ բացում է ԱՄՆ դոլար, Եվրո, ՌԴ ռուբլի արժույթներով ընթացիկ հաշիվներ՝ առանց վերջիններիս համար բացման և սպասարկման լրացուցիչ վճարներ գանձելու:
5. ՀՀ դրամ, ԱՄՆ դոլար, Եվրո, ՌԴ ռուբլի արժույթներից բացի այլ արժույթներով հաշիվների բացումն ու սպասարկումը ինչպես նաև առանց բանկային հաշիվ բացելու՝ սույն Սակագներով չսահմանված ծառայությունների մատուցումն իրականացվում է պայմանագրային սկզբունքով:



6. Հաշիվների սպասարկման շրջանակներում նախատեսված վճարները 3 ամիս անընդմեջ չվճարելու դեպքում Բանկն իրավասու է սառեցնել հաճախորդի բոլոր հաշիվները: Հաշիվները սառեցվում են անվճար: Հաշիվների ապաստանեցումն իրականացվում է ավտոմատ կերպով՝ հաշիվների համալրման պարագայում: Այն դեպքում, երբ հաշվին մուտքագրված միջոցները բավարար չեն հաշիվների ապաստանեցման վճարները գանձելու համար, հաշիվները չեն ապաստանեցվի այնքան ժամանակ, մինչև ամբողջությամբ չվճարվեն սակագներով նախատեսված ապաստանեցման վճարները: Հաշիվների ապաստանեցման վճարը կազմում է 1,500 ՀՀ դրամ:
7. Բանկը կարող է միակողմանիորեն՝ առանց դատարան դիմելու փակել գրոյական մնացորդով և մեկ տարի անընդմեջ շարժ չունեցող հաշիվները:
8. Դրամական միջոցների մուտքագրումը Հաշվին իրականացվում է նույն օրվա ընթացքում, եթե հաճախորդի հետ կնքված պայմանագրով այլ բան նախատեսված չէ:
9. 3,000,000 (երեք միլիոն) ՀՀ դրամը կամ համարժեք արտարժույթը գերազանցող կանխիկ տրամադրումն իրականացվում է նախօրոք ներկայացված հայտի հիման վրա, որը Բանկին ներկայացվում է առնվազն մեկ օր առաջ՝ մինչև ժամը 14:45-ը: Առանց նախնական պատվերի երեք միլիոն ՀՀ դրամից ավելի գումարների տրամադրումը Բանկի կողմից կարող է մերժվել կամ բավարարվել՝ նշված գումարը գերազանցող գումարի 0.5% չափով կանխիկ գումարի ելքագրման լրացուցիչ սակագին գանձելու իրավունքով:
10. Սույն Սակագներով նախատեսված ներբանկային փոխանցումները փաստացի կատարվում են վճարման հանձնարարականը Բանկի կողմից ընդունելու օրը, իսկ միջբանկային փոխանցումները փաստացի կատարվում են (փոխանցվող գումարը Բանկի կողմից ուղարկվում է միջնորդ կամ շահառուի բանկ)՝
  - վճարման հանձնարարականը Բանկի կողմից ընդունելու օրը, եթե
    - ▼ Թղթային հանձնարարականը ներկայացվել է մինչև 13:00-ն,
    - ▼ Հեռակառավարման համակարգերով հանձնարարականը ներկայացվել է մինչև 14:00-ն:
  - վճարման հանձնարարականը Բանկի կողմից ընդունելու օրվան հաջորդող գործառնական օրը (բացառություն են կազմում «Շտապ», հանձնարարականները, որոնք ընդունվում են մինչև տվյալ գործառնական օրվա ժամը 15:00-ն և կատարվում են նույն գործառնական օրը), եթե
    - ▼ Թղթային հանձնարարականը ներկայացվել է 13:00-ից հետո,
    - ▼ Հեռակառավարման համակարգով հանձնարարականը ներկայացվել է 14:00-ից հետո:
  - վճարման հանձնարարականը Բանկի կողմից ընդունելու օրվան հաջորդող գործառնական օրը՝ միջբանկային փոխանցումների հանձնարարականը շաբաթ օրը ներկայացնելու դեպքում:
11. Բանկային ընթացիկ հաշիվների բացման համար անհրաժեշտ փաստաթղթերի ցանկը ներկայացված է Բանկի պաշտոնական կայքում՝ [www.inecobank.am](http://www.inecobank.am):
12. «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքով սահմանված հաճախորդի պատշաճ ուսումնասիրության նպատակով Բանկը կարող է Հաճախորդից «ճանաչիր քո հաճախորդին» («Know your customer») սկզբունքի հիման վրա պահանջել լրացուցիչ փաստաթղթեր կամ այլ տեղեկություններ, ինչպես նաև բանավոր հարողակցման ընթացքում լրացուցիչ հարցեր տալ սպառողին (նման պահանջի առկայության դեպքում):

13. Օտարերկրյա հաշիվների հարկային համապատասխանության ակտի (Foreign Account Tax Compliance Act (FATCA)) հիման վրա ԱՄՆ-ի հետ կնքած համաձայնագրի համաձայն Բանկը Հաճախորդի՝ ԱՄՆ հարկատու հանդիսանալու հանգամանքը պարզելու համար կարող է իրականացնել լրացուցիչ տեղեկատվության հավաքագրում:
14. Ընթացիկ հաշվի ամսական սպասարկման վճարը սկսում է հաշվարկվել հաշիվը բացելու հաջորդ օրացույցային ամսվա սկզբից, իսկ գանձումն իրականացվում է հաշիվը բացելու հաջորդ ամսվա մինչև ամսի 21-ը, եթե այլ բան նախատեսված չէ Հաճախորդի և Բանկի միջև կնքված այլ պայմանագրերով:
15. ՈՒՇԱՂԴՈՒԹՅՈՒՆ՝ հաշիվը և դրանում եղած դրամական միջոցները տնօրինելու Հաճախորդի իրավունքները կարող են սահմանափակվել դատարանի վճռով դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող մարմինների կամ հարկային մարմինների կողմից ներկայացված հայտի հիման վրա, ինչպես նաև Բանկի հետ կնքված գործարքների արդյունքում կիրառված սառեցումների հետևանքով: Ի լրումն Հիմնական պայմաններով նախատեսված դեպքերի՝ առանց Հաճախորդի կարգադրության Հաշվից դրամական միջոցների դուրսգրում կարող է իրականացվել դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող մարմինների, հարկային մարմինների և դրա իրավասությունն ունեցող այլ պետական մարմինների կողմից ներկայացված հայտի/ակտերի հիման վրա:
16. Այն միջնորդավճարները, որոնք ենթակա են ԱԱՀ-ով հարկման, ներառում են նաև ԱԱՀ-ն:
17. Բանկային հաշվի ծառայությունների մասին ամբողջական տեղեկատվությանը կարելի է ծանոթանալ բանկի պաշտոնական կայքում՝ [www.inecobank.am](http://www.inecobank.am):

## Բանկային հաշիվների սպասարկման հիմնական պայմաններ

1. Ստորև ներկայացված դրույթները կարգավորում են Բանկի և Հաճախորդի միջև բանկային, ներառյալ՝ ընթացիկ, քարտային, ավանդային և այլ հաշիվների բացման և սպասարկման կապակցությամբ ծագող պայմանագրային հարաբերությունները: Հաշիվների առանձին տեսակների առանձնահատկությունները և հաշիվներով իրականացվող գործառնությունների տեսակները կարգավորվում են Հիմնական պայմաններով, սակագներով, ուղեցույցներով, ինչպես նաև Հաճախորդի և Բանկի հարաբերությունները կարգավորող այլ փաստաթղթերով:
2. Հիմնական պայմանների և դրանով նախատեսված այլ փաստաթղթերի դրույթները կիրառվում են նաև եսքրոու հաշիվների, նոտարի դեպոզիտ հաշիվների, կառուցապատողի հատուկ հաշիվների, պետական աջակցության հաշիվների, ինչպես նաև ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ հատուկ բանկային հաշիվների նկատմամբ, եթե այլ բան սահմանված չէ հատուկ բանկային հաշիվների առանձնահատկությունները կարգավորող օրենսդրությամբ:
3. Բանկի կողմից առաջարկվում են տարբեր հնարավորություններ ընձեռող հաշիվներ: Ընթացիկ հաշիվները հնարավորություն են ընձեռում իրականացնել կանխիկի մուտքագրում և ելքագրում, դրամական միջոցների վճարումներ և փոխանցումներ, ինչպես նաև Բանկի կողմից սահմանված այլ գործառնություններ:
4. Յուրաքանչյուր հաշիվ սպասարկում է միայն մեկ արժույթ:
5. Մինևույն արժույթով մեկից ավելի հաշիվների առկայության դեպքում Հաճախորդը կարող է տեղեկացնել Բանկին այն հաշվի մասին, որն օգտագործվելու է համապատասխան գործառնության (օրինակ՝ ավանդի տոկոսների վճարման) համար, եթե դա հնարավոր է տվյալ

գործառնության կանոններով: Բանկը կարող է իր հայեցողությամբ ընտրել Հաճախորդի համապատասխան հաշիվը և այն օգտագործել համապատասխան գործառնության համար:

6. Մուտքագրված թղթադրամների և մետաղադրամների կեղծված լինելու հետ կապված կասկածների դեպքում Բանկը կարող է առգրավել դրանք՝ հանձնելով իրավապահ մարմիններին կամ մասնագիտացված անձանց՝ հետագա ուսումնասիրության համար: Այդ դեպքում Բանկը պատասխանատվություն չի կրում հաշվին մուտքագրված գումարի պակասորդի համար:
7. Իր հաշվից այլ անձանց հաշիվներին գումարներ փոխանցելու համար Հաճախորդը կարող է վճարման հանձնարարականներ ներկայացնել Բանկի մասնաճյուղերում, ԻնտեկՕնլայն համակարգի միջոցով, ինչպես նաև քարտային հաշվին կցված վճարային համակարգերի միջոցով, եթե վերջիններս թույլ են տալիս իրականացնել միջոցների փոխանցումներ: Հաճախորդի վճարման հանձնարարականները կատարվում են Հաճախորդի համապատասխան Հաշվին տվյալ հանձնարարականը կատարելու համար (այդ թվում՝ հանձնարարականից բխող Սակագներով նախատեսված համապատասխան վճարները կատարելու) բավարար միջոցների առկայության դեպքում: Հաշվին միջոցների բավարար լինելու փաստը որոշվում է Բանկի կողմից: Վճարման հանձնարարականների մասնակի կատարում չի իրականացվում, բացառությամբ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դեպքերի:
8. Հաճախորդի հաշվում դրամական միջոցների առկայության դեպքում, որոնց գումարը բավարար է հաշվին ներկայացված բոլոր պահանջները բավարարելու համար, այդ միջոցները դուրս են գրվում Հաճախորդի կարգադրությունները և դուրսգրման այլ փաստաթղթերը մուտք լինելու հաջորդականությամբ (օրացուցային հաջորդականություն), եթե այլ բան նախատեսված չէ օրենքով: Բանկը պարտավոր է հաճախորդի կարգադրությամբ հաշվից դրամական միջոցներ դուրս գրել ոչ ուշ, քան համապատասխան վճարային փաստաթուղթը Բանկ մուտք լինելու հաջորդ օրը, եթե այլ ժամկետներ նախատեսված չեն օրենքով, դրան համապատասխան սահմանված բանկային կանոններով կամ սակագներով: Հաճախորդը կարող է ներկայացնել հաշվից ավելի ուշ ամսաթվի միջոցներ փոխանցելու հանձնարարականներ, ինչպես նաև հանձնարարել Բանկին հետագայում պարբերաբար միջոցներ գանձել և փոխանցել վճարման հանձնարարականում նշված հասցեատիրոջը: Այդ դեպքում Բանկը Հաճախորդի հանձնարարականում նշված հասցեատիրոջ օգտին գումարներ է փոխանցում վճարման հանձնարարականում նշված ժամկետում կամ ամսաթվերին՝ հաշվին բավարար միջոցների առկայության դեպքում:
9. Հաշվից միջոցների դուրսգրումը կարող է իրականացվել երրորդ անձանց հանձնարարականներով՝ համապատասխան վճարային համակարգի կանոնների համապատասխան կամ Բանկի սահմանած ձևով: Բանկն իրավունք ունի մերժել երրորդ անձանց պահանջով միջոցների դուրսգրման գործարքները, եթե դրանք չեն համապատասխանում Բանկի սահմանած պահանջներին:
10. Հաշվից գումարներ ելքագրելիս հաշվին միջոցների անբավարար լինելու դեպքերում Բանկը, Հաճախորդի հետ առանձին կնքված պայմանագրի համաձայն, կարող է վարկավորել հաշիվը (տրամադրել օվերդրաֆտ) և միջոցները դուրսգրել Հաճախորդին տրամադրված վարկային միջոցների հաշվին: Հաշվի վարկավորման արդյունքում Հաճախորդին տրամադրված միջոցների օգտագործման, դրանց նկատմամբ հաշվարկվող տոկոսների հաշվարկման կարգն ու չափը սահմանվում են Բանկի և Հաճախորդի միջև առանձին կնքվող պայմանագրով:
11. Հաճախորդի հաշվում դրամական միջոցների անբավարարության դեպքում դրամական միջոցները դուրս են գրվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված հաջորդականությամբ: Եթե Հաճախորդի հաշվին արգելանք դրված չէ, առաջնահերթության իրավունքով Բանկը գանձում է իր նկատմամբ Հաճախորդի չմարված ժամկետանց պարտավորությունների գումարները: Ընդ որում, Բանկն իրավունք ունի իր հայեցողությամբ սահմանել Բանկի նկատմամբ Հաճախորդի ունեցած պարտավորությունների գումարների գանձման հերթականությունը:
12. Բանկը Հաճախորդի բոլոր հաշիվների մնացորդների, դրամական մուտքերի և հաշվեգրվելիք տոկոսագումարների նկատմամբ ունի գրավի իրավունք՝ ի ապահովումն Հաճախորդի՝ Բանկի հետ կնքված բոլոր գործարքներից, ինչպես նաև ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ հիմքերով Բանկի նկատմամբ առաջացած պարտավորությունների կատարման: Հաճախորդն իրավունք չունի առանց Բանկի գրավոր համաձայնության գրավ դնել կամ այլ կերպ ծանրաբեռնել հաշվում առկա և/կամ ստացվելիք դրամական միջոցները:

13. Հաճախորդի պահանջով Բանկը պարտավոր է հնգօրյա ժամկետում Հաճախորդին տրամադրել իր հաշվի վերաբերյալ Հաշվի քաղվածք՝ գանձելով հաշվի քաղվածքի տրամադրման համար Սակագներով սահմանված վճարները:
14. Քաղվածքում արտացոլված տվյալները համարվում են հաշվով կատարված գործարքների մասին պատշաճ ծանուցում: Քաղվածքում ներկայացված տվյալները համարվում են ընդունված և հաստատված Հաճախորդի կողմից, եթե Հաճախորդը քաղվածքի վերաբերյալ դիտողությունները գրավոր ձևով չի ներկայացրել Բանկին՝ քաղվածքը ստանալու պահից 30 (երեսուն) բանկային օրվա ընթացքում: Բանկը պատասխանատու չէ քաղվածքների առաքման հետ կապված փոստային ծառայությունների կամ կապի միջոցների սխալի, թերացման, քաղվածքների կորստյան կամ հափշտակության հետևանքով առաջացած վնասի, ներկայացված պահանջների կամ տեղեկատվության հրապարակման համար:
15. Բանկն իրավունք ունի միակողմանիորեն՝ առանց դատարան դիմելու դադարեցնել հաշվի սպասարկումը կամ փակել այն, եթե կասկածներ կան հաշիվներով իրականացվող գործառնությունների օրինականության վերաբերյալ կամ Հաճախորդը, Բանկի կողմից սահմանված ժամկետում չի տրամադրել Բանկի կողմից պահանջված տեղեկությունները, ինչպես նաև Հաճախորդի կողմից ստանձնած այլ պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման դեպքերում:
16. Հաճախորդն իրավունք ունի ցանկացած ժամանակ միակողմանիորեն հրաժարվել հաշվից և դիմել Բանկին հաշիվը փակելու համար՝ այդ մասին Բանկին ոչ ուշ քան 7 (յոթ) բանկային օր առաջ Բանկի կողմից սահմանված եղանակով ծանուցելով և ամբողջությամբ մարելով Բանկի նկատմամբ ունեցած իր պարտավորությունները: Բանկը կարող է հրաժարվել հաշիվը փակելուց, եթե հաշվի վրա դրված են արգելանքներ կամ այլ սահմանափակումներ, կամ հաշիվն անհրաժեշտ է Հաճախորդի կողմից օգտագործվող այլ ծառայություններից օգտվելու համար, կամ Հաճախորդն ունի չկատարված պարտավորություններ Բանկի հանդեպ: Հաշիվը փակելուց առաջ հաշվում եղած դրամական միջոցների մնացորդը վճարվում է Հաճախորդին, կամ նրա ցուցումով փոխանցվում է այլ հաշվի՝ Հաճախորդի համապատասխան գրավոր դիմումը ստանալուց ոչ ուշ, քան յոթ օրվա ընթացքում:
17. Հաշվի փակման պահից դադարեցվում են այդ հաշիվը սպասարկող Քարտերի սպասարկումն ու Համակարգերից օգտվելու Հաճախորդի լիազորությունները: Եթե այլ բան սահմանված չէ Բանկի կողմից, հաշիվը փակելիս փակվում են նաև դրան կցված այլ հաշիվները:

## Հաշվի սպասարկումից բխող վեճերի լուծման կարգ

1. Պայմանագրի գործողության ընթացքում կողմերի միջև ծագած վեճերը և տարաձայնությունները լուծվում են բանակցությունների միջոցով: Բանակցությունների միջոցով համաձայնության չգալու դեպքում վեճը լուծվում է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:
2. Հաճախորդը բողոքը (բացառությամբ՝ բողոք-պահանջի) և դիմումը կարող է Բանկին ներկայացնել առձեռն (հանձնելով գրությունը Բանկի գործունեության վայրում), փոստով (ուղարկելով Բանկի գլխամասային գրասենյակի փոստային հասցեով), Բանկի պաշտոնական ինտերնետային կայքում տեղադրված բողոքարկման հայտի միջոցով, հեռախոսով (զանգահարելով Բանկի Կոնտակտային կենտրոն) կամ Բանկի այլ հեռահար հաղորդակցման ուղիներով (Էլեկտրոնային փոստով, Ինտեր Օնլայն համակարգով, սոցիալական ցանցերի միջոցով և այլն): Բողոք-պահանջը Բանկին ներկայացվում է գրավոր՝ առձեռն, փոստով կամ Բանկի պաշտոնական ինտերնետային կայքում տեղադրված բողոքարկման հայտով:
3. Բանկը բողոքի վերաբերյալ որոշում է կայացնում (բավարարել, մասնակի բավարարել, մերժել) 10 աշխատանքային օրվա ընթացքում:

## Բանկային ծառայությունների մատուցումը հեռակառավարման համակարգերի միջոցով

1. Բանկն առաջարկում է ԻնտերՕնլայն և այլ համակարգեր (այսուհետ՝ Չամակարգեր)՝ ինտերնետով, հեռախոսազանգի կամ SMS հաղորդագրության և կապի այլ միջոցներով բանկային ծառայություններից օգտվելու, ինչպես նաև տեղեկություններ ստանալու հնարավորություն՝ առանց Բանկ այցելելու: Չամակարգերը ժամանակակից և հարմարավետ գործիքներ են, որոնք հնարավորություն են ընձեռում դիտել հաշիվներով կատարվող գործառնությունները, ներկայացնել վճարման հանձնարարականներ, ստանալ տեղեկություններ, կատարել արտարժույթի փոխանակում, վճարումներ, ներկայացնել և ստանալ (ակցեպտավորել) դիմումներ, հայտեր, առաջարկներ (օֆերտաներ), կնքել պայմանագրեր և այլ գործարքներ, ինչպես նաև իրականացնել տվյալ համակարգում Բանկի կողմից մատչելի դարձված ֆինանսական և այլ գործառնություններ: Չամակարգերի տեսակները, դրանց օգտագործման պայմանները և կանոնները հրապարակվում են Բանկի պաշտոնական կայքում կամ համապատասխան Չամակարգից օգտվելու համար սահմանված այլ կայքերում, ծրագրային ապահովման միջոցներում և բջջային հավելվածներում և կարող են ժամանակ առ ժամանակ փոփոխվել:
2. Չամակարգերը հասանելի են Բանկում համապատասխան հաշիվներ ունեցող Չաճախորդների համար: Չաճախորդին համապատասխան Չամակարգից օգտվելու սարքի, օգտագործողի անվան, գաղտնաբառի, ինչպես նաև Չաճախորդին համակարգից օգտվելու հնարավորություն այլ կերպ ընձեռելը նշանակում է, որ Չաճախորդի և Բանկի միջև կնքվել է Չամակարգի տրամադրման պայմանագիր՝ Չիմական պայմաններին համապատասխան: Չամակարգի տրամադրման պայմանագրի անբաժանելի մասն են Չիմական պայմանները, սակագները, համապատասխան Չամակարգի օգտագործման ուղեցույցները, Բանկի ինտերնետային կայքերի, բջջային հավելվածների և այլ ծրագրային ապահովման օգտագործման կանոնները և պայմանները, ինչպես նաև Չաճախորդի և Բանկի հարաբերությունները կարգավորող այլ փաստաթղթերը:
3. Չամակարգ մուտք գործելու համար անհրաժեշտ օգտագործողի անվանման, գաղտնաբառերի, կամ այլ հաղորդագրությունների մուտքագրմամբ Բանկն իրականացնում է Չաճախորդի անհրաժեշտ և բավարար նույնականացում, ինչը հիմք է Չամակարգերի միջոցով Չաճախորդին բանկային ծառայություններ մատուցելու համար:
4. Չաճախորդին նույնականացնելուց հետո Չամակարգ մուտք գործելու համար Չաճախորդի կողմից օգտագործվող գաղտնաբառն ունի թղթային կրիչի վրա դրված բնօրինակ ստորագրությանը համարժեք իրավաբանական ուժ: Չաճախորդի կողմից Չամակարգ մուտք գործելուց հետո Չամակարգի միջոցով Բանկ ներկայացվող բոլոր հայտերը, դիմումները, պայմանագրերն ու այլ էլեկտրոնային փաստաթղթերը համարվում են ստորագրված Չաճախորդի կողմից: ԻնտերՕնլայն Չամակարգի միջոցով տեղեկատվություն փոխանակելը հավասարազոր է Բանկի տարածքում առձեռն փոխանակելուն:
5. Չամակարգերի միջոցով Չաճախորդների սպասարկումը իրականացվում է միայն Չաճախորդի (Չաճախորդի ներկայացուցչի) մոտ համապատասխան Չամակարգից օգտվելու համար անհրաժեշտ ծրագրային և տեխնիկական ապահովվածության առկայության դեպքում: Ընդ որում Բանկը Չաճախորդին հեռակառավարման համակարգերի միջոցով ծառայություններ մատուցում է բացառապես Բանկի համար ընդունելի ծրագրային և տեխնիկական ապահովվածության միջոցների կիրառմամբ: Չամակարգերից օգտվելիս կարող են կիրառվել ինտերնետային, էլեկտրոնային և այլ հեռահաղորդակցության ծառայություններ մատուցող օպերատորների և այլ անձանց օգտին գանձվող վճարներ, որոնց համար Բանկը պատասխանատվություն չի կրում:

6. Հաճախորդը պարտավոր է խստիվ պահպանել Համակարգ մուտք գործելու գաղտնաբառի և այլ նույնականացնող տվյալների գաղտնիությունը և անհրաժեշտ շրջահայացություն ցուցաբերել Համակարգերն օգտագործելիս այլ անձանց կողմից Համակարգ ապօրինի մուտքի հնարավորությունը և տվյալների հասանելիությունը բացառելու համար: Բանկը պատասխանատվություն չի կրում դրանք երրորդ անձանց բացահայտվելու արդյունքում Հաճախորդին պատճառված վնասների համար:
7. ԻնտեկտՕնլայն և այլ Համակարգերից օգտվելու համար Բանկը կարող է տրամադրել ծրագրային ապահովում, անվտանգության բանալիներ, չիպեր, թոքեններ և Համակարգ մուտք գործելու անվտանգությունն ապահովող այլ սարքեր: Այդ սարքերը համարվում են Բանկի սեփականությունը և ենթակա են օգտագործման Բանկի սահմանած կարգով: Սարքի կորստի կամ փչացման դեպքում Հաճախորդը պարտավոր է անհապաղ տեղեկացնել Բանկին: Բանկը կարող է պահանջել անհապաղ հետ վերադարձնել Հաճախորդին տրամադրված սարքերը, փոխարինել դրանք, ինչպես նաև սահմանել դրանց օգտագործման հատուկ կարգ և պայմաններ:
8. Իրավաբանական անձ (ներառյալ՝ իրավաբանական անձի մասնաճյուղ, ներկայացուցչություն և այլ առանձնացված ստորաբաժանում), հիմնարկ կամ անհատ ձեռնարկատեր Հաճախորդների անունից Համակարգը կարող են շահագործել վերջիններիս անունից լիազորված մեկ կամ մի քանի օգտագործողներ: Հաճախորդը պատասխանատվություն է կրում օգտագործողների կողմից կատարված գործառնությունների հետևանքով Բանկին կամ երրորդ անձանց պատճառված վնասի հատուցման համար: Բանկը պատասխանատվություն չի կրում օգտագործողների կողմից կատարված գործառնությունների հետևանքով Հաճախորդին կամ երրորդ անձանց պատճառված վնասի համար: Հաճախորդը պարտավորվում է ինքնուրույն կարգավորել և Բանկին զերծ պահել ցանկացած պահանջներից, որոնք առաջացել են օգտագործողների կողմից Համակարգի շահագործման ընթացքում:
9. Համակարգերը ենթակա են օգտագործման դրանց նպատակային նշանակությանը խիստ համապատասխան: Հաճախորդը պարտավոր է պահպանել Համակարգերի ծրագրային ապահովման օգտագործման հետ կապված մտավոր սեփականության բոլոր իրավունքները և թույլ չտալ Համակարգի ծրագրային ապահովման պաշտպանված մասի վերձանում, ձևափոխում, արտատպում և տարածում:
10. Բանկն օգտագործում է Համակարգերով տվյալների փոխանցման անվտանգությունն ապահովող ժամանակակից և հուսալի միջոցներ: Այդուհանդերձ, Հաճախորդը Համակարգերն օգտագործում է իր ռիսկով և Բանկը պատասխանատվություն չի կրում Համակարգերի օգտագործման հետ կապված խափանումների, տվյալների կորուստների, ինչպես նաև Համակարգերի օգտագործումից բխող Հաճախորդների տվյալների բացահայտման և Հաճախորդների ցանկացած այլ կորուստների և վնասների համար:
11. Համակարգերը տրամադրվում են դրանց հասանելիության պահին գործող պայմաններով և հնարավորություն են տալիս օգտվել փաստացի այդ պահին մատչելի գործառնություններից: Հաճախորդը տեղյակ է, որ կախված վճարային համակարգերի կանոններից և տեխնիկական հնարավորություններից, Քարտային և այլ հաշիվների, ինչպես նաև այլ գործառնությունների վերաբերյալ որոշ տեղեկություններ կարող են Համակարգում արտացոլվել կամ թարմացվել հետագայում: Հաճախորդներին առաջարկվող ծառայությունների ցանկն ու առանձին հնարավորությունները կարող են սահմանափակվել կախված Հաճախորդի համակարգչի կամ այլ տեխնիկական միջոցների հնարավորություններից, կապի որակից, Բանկի կողմից իրականացվող տեխնիկական սպասարկման աշխատանքներից և այլ գործոններից: Բանկը կարող է ավելացնել կամ պակասեցնել Համակարգերով մատուցվող գործառնությունների շրջանակը, ինչպես նաև դադարեցնել կամ կասեցնել Համակարգի մատչելիությունը, (ներառյալ՝ լուծել Համակարգի տրամադրման պայմանագիրը)՝ տեխնիկական սպասարկման աշխատանքներ իրականացնելու կամ այլ պատճառներով:
12. Համակարգերի միջոցով Հաճախորդի ներկայացրած հայտերի ուսումնասիրման արդյունքների, ինչպես նաև Հաճախորդի այլ գործառնությունների մասին Բանկը կարող է տեղեկացնել Էլեկտրոնային եղանակով, ներառյալ՝ Համակարգը սպասարկող ինտերնետային էջերի կամ բջջային հավելվածների համապատասխան մասում տեղեկություններ տեղադրելով, Էլեկտրոնային փոստով, բջջային հեռախոսահամարին ուղարկված կարճ հաղորդագրությունների (SMS), Համակարգի բջջային հավելվածների կողմից ուղարկվող

հաղորդագրությունների (Push Notifications) միջոցով և այլ եղանակներով: Համակարգի միջոցով կատարված գործառնությունների մասին տվյալները պահպանվում են Բանկի սերվերներում և համարվում են ապացույց՝ վիճելի հարցերի կարգավորման համար:

13. Բանկն իրավունք ունի Համակարգի միջոցով կատարվող գործառնությունների համար նախատեսել սահմանաչափեր, ինչպես նաև Հաճախորդի հանձնարարականներն ու ցուցումները կատարելիս իրականացնել Հաճախորդի ինքնության հավելյալ ստուգում՝ պահանջելով լրացուցիչ ձայնային կամ այլ հաստատում: Բանկը կարող է կասեցնել կամ դադարեցնել Համակարգ մուտք գործելու Հաճախորդի հնարավորությունը՝ սակագներով և այլ փաստաթղթերով նախատեսված վճարները չկատարելու, սույն Հիմնական պայմանների պահանջները խախտելու, ինչպես նաև Հաճախորդի նույնականության վերաբերյալ կասկածներ ունենալու դեպքերում:
14. Համակարգի տրամադրման պայմանագրի լուծումը չի հանգեցնում Բանկի և Հաճախորդի միջև առկա այլ պայմանագրային հարաբերությունների փոփոխմանը կամ դադարեցմանը, եթե գրավոր ձևով այլ բան համաձայնեցված չէ:

## **ԾԱՆՈՒՑՈՒՄ ԱՎԱՆԴՆԵՐԻ ՀԱՏՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՄԱՆ ԴԱՅՄԱՆՆԵՐԻ ԵՎ ԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ ԱԶ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀԱՃԱԽՈՐԴՆԵՐԻ ՀԱՄԱՐ**

Սույն ծանուցման բոլոր սահմանումները համապատասխանում են «Ֆիզիկական անձանց բանկային ավանդների հատուցումը երաշխավորելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (այսուհետ՝ Օրենք) սահմանումներին:

### **Հատուցման դեպքը**

Ձեր երաշխավորված ավանդը ենթակա է հատուցման հետևյալ դեպքերում.

1. Եթե Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով բանկը ճանաչվում է անվճարունակ և Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի (այսուհետ՝ Կենտրոնական բանկ) խորհրդի որոշմամբ հաստատվում է բանկի կողմից օրենքով և պայմանագրերով սահմանված ժամկետներում ավանդները վերադարձնելն ի վիճակի չլինելու փաստը կամ
2. Եթե Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով բանկը սնանկ է ճանաչվում (այսուհետ՝ անվճարունակ բանկ):

### **Երաշխավորված ավանդի առավելագույն չափը և հաշվարկման կարգը**

Երաշխավորված ավանդների հաշվարկման կարգը սահմանվում է Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2008 թվականի օգոստոսի 26-ի թիվ 261-Ն որոշմամբ:

**ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ:** Ձեր՝ նույն բանկում ունեցած բոլոր դրամային ավանդները համարվում են մեկ դրամային ավանդ, բացառությամբ չերաշխավորված ավանդների, և Ձեր՝ նույն բանկում ունեցած բոլոր արտարժութային ավանդները համարվում են մեկ արտարժութային ավանդ, բացառությամբ չերաշխավորված ավանդների:

**Ավանդների երաշխավորվող սահմանաչափերը հետևյալն են՝**

Ավանդի արժութային կառուցվածքը	Եթե նույն բանկում ունեք միայն դրամային ավանդ	Եթե նույն բանկում ունեք միայն արտարժութային ավանդ	Եթե նույն բանկում ունեք և ԶԶ դրամով, և արտարժույթով ավանդ	
			Եթե դրամային ավանդը 7 միլիոն դրամից ավելի է	Եթե դրամային ավանդը 7 միլիոն դրամից պակաս է
Ավանդի երաշխավորման առավելագույն չափը	16 միլիոն ԶԶ դրամ	7 միլիոն ԶԶ դրամ	16 միլիոն ԶԶ դրամ (երաշխավորվում է միայն դրամային ավանդը)	7 միլիոն ԶԶ դրամ (երաշխավորվում է դրամային ավանդն ամբողջությամբ և արտարժութային ավանդը՝ 7 միլիոն դրամի և հատուցման ենթակա դրամային ավանդի տարբերության չափով)

- Եթե Դուք անվճարունակ բանկում ունեք առանձին բանկային ավանդ և միևնույն ժամանակ նույն բանկում ներդրված համատեղ բանկային ավանդի սեփականատեր եք, ապա երաշխավորվում է Ձեր առանձին բանկային ավանդի և համատեղ բանկային ավանդում Ձեր մասնաբաժնի հանրագումարը՝ Օրենքով սահմանված կարգով և չափով:
- Եթե դուք անվճարունակ բանկի նկատմամբ ունեք պարտավորություն, ապա հատուցման ենթակա գումարը կհաշվարկվի Ձեր բանկային ավանդի և պարտավորության դրական տարբերության հիման վրա՝ Օրենքով սահմանված կարգով և չափով:
- Երկու կամ ավելի ավանդատուների համատեղ բանկային ավանդը համարվում է յուրաքանչյուր անձի առանձին բանկային ավանդ, ավանդատուի՝ պայմանագրով սահմանված մասնաբաժնի չափով: Եթե պայմանագրով սահմանված չեն համատեղ բանկային ավանդի ավանդատուների մասնաբաժինները, ապա համատեղ բանկային ավանդն ավանդատուների միջև բաժանվում է հավասարաչափ:
- Բանկային ավանդի հատուցումը կատարվում է միայն հայկական դրամով: Արտարժութային բանկային ավանդի դրամական համարժեքությունը որոշվում է հատուցման դեպքը տեղի ունենալու օրվա դրությամբ Կենտրոնական բանկի հրապարակած՝ արժութային շուկաներում ձևավորված միջին փոխարժեքով:
- Ձեր բանկային ավանդը չի հատուցվում, եթե հատուցման դեպքը տեղի ունենալու օրվա դրությամբ այդ ավանդը պակաս է 1000 հայկական դրամից:

Չերաշխավորված բանկային ավանդ



Ձեր բանկային ավանդը երաշխավորված չէ, եթե՝

- ա) Դուք հանդիսանում եք տվյալ բանկի ղեկավար և (կամ) վերջինիս ընտանիքի անդամ,
- բ) Դուք հանդիսանում եք տվյալ բանկում նշանակալից մասնակցություն ունեցող անձ և (կամ) վերջինիս ընտանիքի անդամ,
- գ) Դուք, որպես ավանդի սեփականատեր (համասեփականատեր), հրաժարվել եք ավանդի՝ Ձեր մասի նկատմամբ սեփականության իրավունքից,
- դ) Ձեր ավանդն օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով ճանաչվել է հանցավոր ճանապարհով ձեռք բերված դրամական միջոց, բանկի դեռ Դուք հակառակը չեք ապացուցել,
- ե) Ձեր ավանդը տվյալ բանկում ներդրվել է բանկային ավանդի ներդրման պահին տվյալ բանկի կողմից հրապարակային պայմանագիր կնքելու առաջարկով նախատեսված նմանատիպ բանկային ավանդների տոկոսադրույքն առնվազն 1,5 անգամ գերազանցող տոկոսադրույքով,
- զ) Ձեր ավանդը ներդրված է բանկի՝ Չայաստանի Հանրապետության տարածքից դուրս ստեղծված մասնաճյուղերում:

ԲԱՑԻ ԱՅԴ, ԱՎԱՆԴՆԵՐԻ ՀԱՏՈՒՑՈՒՄԸ ԵՐԱՃԻՆԱՎՈՐՈՂ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՈՂՄԻՑ ՉԵՆ ԵՐԱՃԻՆԱՎՈՐՎՈՒՄ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՄԵՏԱՂԱԿԱՆ ՀԱՃԻՎՆԵՐՈՒՄ ԱՌԿԱ ՄԻՋՈՑՆԵՐԸ:

Երաշխավորված ավանդների հատուցման կարգը և ժամկետները

Հատուցման դեպքի օրվան հաջորդող երեք աշխատանքային օրվա ընթացքում Հիմնադրամը հայտարարություն է հրապարակում հատուցման դեպքի մասին: Հատուցման դեպքի օրվան հաջորդող երեսուրյա ժամկետում Հիմնադրամը անվճարունակ բանկի կամ այլ բանկի միջոցով, սկսում է իրականացնել Ձեր ավանդների հատուցման գործընթացը: Գործընթացը սկսվում է զանգվածային լրատվական միջոցներում հատուցման վերաբերյալ Հիմնադրամի կողմից լրացուցիչ հայտարարություն հրապարակելու պահից: Դուք կարող եք գրավոր պահանջ ներկայացնել ոչ ուշ, քան հատուցման դեպքի օրվան հաջորդող մեկ տարվա ընթացքում: Նշված ժամկետում Ձեր կողմից գրավոր պահանջ չներկայացնելու դեպքում Հիմնադրամի կողմից Ձեր երաշխավորված ավանդի հատուցում չի իրականացվի: Հիմնադրամը պարտավոր է իրականացնել ավանդատուների պահանջներով հատուցումները՝ գրավոր պահանջը ներկայացնելու օրվան հաջորդող երեք ամիսների ընթացքում, բացառությամբ Օրենքով նախատեսված դեպքերի:

Երաշխավորված ավանդի գումարի հատուցումից հետո անվճարունակ բանկի հանդեպ Ձեր ունեցած դրամական պահանջը՝ հատուցված գումարի չափով համարվում է բավարարված: Հատուցման չափը գերազանցող գումարը համարվում է անվճարունակ բանկի պարտավորությունը Ձեր նկատմամբ:

ՈՒՃԱԴՐՈՒԹՅՈՒՆ: Ձեր ավանդի հատուցումն առավել սահուն իրականացնելու նպատակով առաջարկում ենք ավանդի ներդրման ժամանակ Ձեր կողմից բանկին տրամադրված տվյալների (անձը հաստատող փաստաթղթի տվյալներ, սոցիալական ապահովության քարտի տվյալներ, հասցե, հեռախոսահամար և այլն) ցանկացած փոփոխության դեպքում այդ մասին անմիջապես տեղեկացնել բանկին: